Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՕՐԻՖԼԵՅՄ ՔՈՍՄԵԹԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՄԵԼԻՔՅԱՆՍ ԸՆԴ ՔՈ
ՀՀ, ք.Երևան 0014
Ազատության 24/19
Հեռ. + 374 95 90 19 49

MELIKYANS & CO
24/19 Azatutyan Str.
0014 Yerevan, Armenia
Tel. + 374 95 90 19 49
www.mco.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Օրիֆլեյմ Քոսմեթիքս» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության բաժնետիրոջը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՕՐԻՖԼԵՅՄ ՔՈՍՄԵԹԻՔՍ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Մենք նշանակվել ենք «Օրիֆլեյմ Քոսմեթիքս» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության 2021թ. Մայիսի 17-ին և այդ պատճառով չենք մասնակցել Ընկերության պաշարների տարեվերջի գույքագրմանը, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 416,631 հազար դրամ: Մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկայության վերաբերյալ: Նշվածի արդյունքում, մենք անկարող էինք որոշել, արդյո՞ք որևէ ճշգրտում անհրաժեշտ էր հաշվառված կամ չհաշվառված պաշարների վերաբերյալ:

2. Ընկերության կողմից պաշարների գնումներն հիմնականում իրականացվում են արտերկյա մատակարարներից՝ վերջիններիս արտարժույթով կանխավճարներ տրամադրելու միջոցով: Համաձայն ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հետևաբար, Ընկերությունն արտարժույթով կանխավճարներ տրամադրելու միջոցով ձեռքբերված պաշարների ինքնարժեքը պետք է վերահաշվարկեր տրամադրված կանխավճարների ամսաթվերի դրությամբ կիրառելի փոխարժեքներով, սակայն վերահաշվարկել է հիմք ընդունելով պաշարների ներմուծման հայտարարագրերում արտացոլված փոխարժեքները: Նշվածի արդյունքում, մենք անկարող էինք ձեռք բերել բականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ տարեվերջի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված պաշարների և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

հաշվետվությունում ներկայացված վաճառքի ինքնարժեքի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական

MELIKYANS & CO

խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արամ Մելիքյան

Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան

Առաջադրանքի պատասխանատու

Աուդիտոր՝

28 հունիս 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	280,962	290,861
Ոչ նյութական ակտիվներ	5	1,426	2,635
		282,388	293,496
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	416,631	711,350
Հետաձգված հարկային ակտիվներ	19	346	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	725,245	1,782,181
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	164,281	423,143
		1,306,503	2,916,674
Ընդամենը ակտիվներ		1,588,891	3,210,170
Սեփական կապիտալ և պարտավորություններ	9		
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		50	50
Կուտակված շահույթ		1,212,040	2,757,271
		1,212,090	2,757,321
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	-	5,372
Վարձակալություն	10	51,706	51,582
		51,706	56,954
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	224,044	318,992
Շահութահարկի գծով պարտավորություն		50,829	47,083
Վարձակալություն	10	50,222	29,820
		325,095	395,895
		376,801	452,849
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,588,891	3,210,170

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 28 հունիսի 2021թ.

Տնօրեն Նաիրա Մարգարյան

Գլխավոր հաշվապահ Հայկանուշ Մանուկյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ.	2019թ.
Հասույթ	12	2,597,336	5,668,492
Վաճառքի ինքնարժեք	13	(1,546,800)	(3,369,290)
Համախառն շահույթ		1,050,536	2,299,202
Այլ եկամուտ		1,728	315
Իրացման ծախսեր	14	(708,467)	(1,513,381)
Վարչական ծախսեր	15	(521,506)	(625,568)
Այլ ծախսեր	16	(15,195)	(35,791)
Գործառնական գործունեությունից շահույթ		(192,904)	124,777
Զուտ ֆիանանսական ծախս	17	(10,166)	(6,014)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	18	239,755	(54,387)
Այլ վնաս		(7,088)	(129)
Շահույթ մինչև հարկերը		29,597	64,247
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	19	1,972	(45,590)
Տարվա շահույթ		31,569	18,657
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		31,569	18,657

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	50	2,892,975	2,893,025
Տարվա շահույթ	-	18,657	18,657
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	18,657	18,657
Նախորդ տարիների էական սխալների ուղղում	-	9,139	9,139
Շահաբաժիններ	-	(163,500)	(163,500)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(163,500)	(163,500)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	2,757,271	2,757,321
Տարվա շահույթ	-	31,569	31,569
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	50	2,788,840	2,788,890
Շահաբաժիններ		(1,576,800)	(1,576,800)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	(1,576,800)	(1,576,800)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	1,212,040	1,212,090

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		3,104,414	6,905,753
Տրված կանխավճարի ետ ստացում		1,619,905	52,147
Հանձնարարության պայմանագրով կատարված ծախսերի փոխհատուցում		-	660
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր		3,464	4,063
Վճարումներ մատակարարներին		(2,845,388)	(5,079,903)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(192,048)	(202,506)
Վճարումներ բյուջե		(358,017)	(1,210,380)
Գործառնական գործունեությունից այլ ելքեր		(9,220)	(7,133)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		1,323,110	462,701
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(19,350)	(43,271)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(19,350)	(43,271)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վճարված շահաբաժիններ		(1,576,800)	(163,500)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(1,576,800)	(163,500)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ		(273,040)	255,930
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		14,178	(5,962)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		423,143	173,175
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	8,27	164,281	423,143

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Ընկերությունը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրի Երևանի Արաբկիրի տարածքային բաժնում 2002թ. դեկտեմբերի 25-ին համաձայն 2002թ. նոյեմբերի 1-ի հիմնադիր ժողովի արձանագրության: Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է: Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է կոսմետիկական և այլ նյութերի մանրածախ վաճառքով:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Քաջազնունի 20:

2020 թվականի ընթացքում Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 51 աշխատակից (2019 թվականի ընթացքում՝ 53 աշխատակից):

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա ՝Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Կառավարությունը սահմանել է արդյունավետ կառավարման իր հայեցակարգը, որը ենթադրում է թափանցիկություն, հաշվետվողականություն և հակակոռուպցիոն մեխանիզմներ:

2020թ.-ին վեր հասած Կոռոնավիրուսը (COVID 19), որը Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից որակվեց որպես «պանդեմիա», էական ազդեցություն ունեցավ համաշխարհային տնտեսության վրա:

2020թ. Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմը, կանգնեցրեց ՀՀ տնտեսությունը խորը ճգնաժամի առջև: Կնքվեց զինադադարի համաձայնագիր, որի արդյունքում սրվեցին քաղաքական իրադարձությունները և էլ ավելի մեծացավ անորոշությունը ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման նկատմամբ:

2020թ.-ի իրադարձությունների հնարավոր հետևանքները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա: Բացի այդ, համաշխարհային տնտեսության անկմամբ պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար օգտագործվող բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք ուժի մեջ են մտել 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար: Նշված նոր և վերանայված ստանդարտների և մեկնաբանությունների փոփոխությունները և ազդեցությունը, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ստորև ներկայացնում ենք այն ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առանջին անգամ կիրառվել են 2020թ., և որոնց ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներ,
- «Էականության սահմանումը» (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

- «COVID 19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ» (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Վերոնշյալ ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշ նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախապես չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր հրապարակումները, որոնք կիրառելի կլինեն Ընկերության համար կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ դրանք էական ազդեցություն չէն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

- ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* - պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020թ. հունվար ամսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* փոփոխությունները, որոնք հստակեցնում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կիրառվող չափանիշները: Փոփոխությունները նախատեսված են պարտավորությունների դասակարգման հանդեպ ավելի ընդհանուր մոտեցում տրամադրելու համար՝ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրային պայմանները:

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե արդյոք Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ իրավունք ունի՞ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Փոփոխությունները նաև պարզաբանում են, որ «մարել» եզրույթը ներառում է կանխիկի, ապրանքների, ծառայությունների կամ սեփական կապիտալի գործիքների փոխանցումը, եթե սեփական կապիտալի գործիքները փոխանցելու պարտավորությունը չի առաջանում փոխարկման հատկանիշից, որը բաղադրյալ ֆինանսական գործիքի պարտավորության բաղադրիչից առանձին է դասակարգված որպես սեփական կապիտալի գործիք:

Քանի որ այս փոփոխությունները գոյություն ունեցող պահանջները պարզաբանում, բայց չեն փոխում, չի ակնկալվում, որ դրանք նշանակալի ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

- ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»

ՖՀՄՍ 16-ը *«Վարձակալություններ» փոխարինում է* ՀՀՄՍ 17-ը *«Վարձակալություն»*, առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ:

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Ընկերությունն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման միասնական ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում որպես կուտակված արդյունքի սկզբնական մնացորդի ճշգրտում ընթացիկ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Ընկերությունն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Ընկերությունը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Սկզբնական կիրառման ամսաթվին օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման ստուգում կատարելու փոխարեն, Ընկերությունը հիմնվել է պատմական գնահատման վրա՝ արդյոք վարձակալություններն անբարենպաստ են, թե ոչ, անմիջապես նախքան ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Ընկերությունը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես ֆինանսական վարձակալություններ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալական պարտավորությունը սկզբնական կիրառման ամսաթվին չափվում են այն գումարով, որով չափվել են անմիջապես նախքան սկզբնական կիրառման ամսաթիվը՝ ՀՀՄՍ 17-ի կիրառմամբ:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառված լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը կազմում է 11.6%:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Ընկերությունն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 16-ի համաձայն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների տողերի համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

Հազար դրամ

	Հաշվե-կշռային արժեքը ՀՀՄՍ 17-ի համաձայն 31.12.2018	Վերադա-սակարգում	Վերա-չափում	Հաշվե-կշռային արժեքը ՖՀՄՍ 16-ի համաձայն 01.01.2019
Հիմնական միջոցներ	-	-	109,067	109,067
Վարձակալության գծով պարտավորություն	-	-	109,067	109,067

Այլ ստանդարտներ, մասնավորապես՝

- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների փոփոխություններ
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան փոփոխություններ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 16, ՀՀՄՍ 41)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»
- ՖՀՄՍ 3 (Փոփոխություններ) «Բիզնեսի սահմանում»

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 ՖՀՄՍ-ների առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էապես չի տարբերվում Ընկերության հաշվապահական հաշվառման ստանդարտներով պատրաստված ֆինանսական հաշվետվություններից:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	2020	2019
ԱՄՆ դոլար	522.59	479.70
Եվրո	641.11	537.26
Ռուսական ռուբլի	7.02	7.77

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն զուտ ակտիվներում:

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներից տրանսպորտային միջոցները, մեքենասարքավորումները, փոխանցող հարմարանքները, համակարգչային տեխնիկան, արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքները և այլ հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող

ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքերի, շինությունների գծով կապիտալ ներդրումներ	-	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	10 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Փոխանցող հարմարանքներ	-	10 տարի
Համակարգչային տեխնիկա	-	10 տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	-	10-20 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	-	1-10 տարի

Լիցենզիաներ	իրավաբանորեն ամրագրված իրավունքի ժամկետում

3.5 Վարձակալված ակտիվներ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.5-ում, Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը, այդպիսով համադրելի տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Դա նշանակում է, որ համադրելի տեղեկատվությունը դեռևս ներկայացված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն:

2019թ. հունվարի 1-ից սկսած կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունը որպես վարձակալ

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից:

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության

փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ առևտրային և այլ պարտավորություններում:

Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունը որպես վարձակալ

Գործառնական վարձակալություն

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ

ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության մնացորդները բանկերում և դրամարկղում, առևտրային դեբիտորական պարտքերը և տրված կարճաժամկետ փոխառությունները:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում,

անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և

ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Ընկերությունը դեբիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար օգտագործում է ՖՀՄՍ 9-ի կողմից թույլատրվող պարզեցված մոտեցում, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Ընկերության պատմական կորստի դրույքաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Ընկերությունը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքոնշյալ դրույքներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի պայմանագրային ժամկետայնության օրեր	Արժեզրկման տոկոս
Մինչև 90 օր	10%
91-180 օր	20%
181-270 օր	50%
271 և ավել	100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.13 Հասույթ

ՖՀՄՍ 15. «Հասույթ գնորդների հետ կնքված պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Ընկերության կողմից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Վարձակալված շենքի գծով ներդրումներ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական տնտեսական գույք	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	112,383	10,431	114,398	21,253	90,182	-	348,647
ՖՀՄՍ 16-ին անցնելու հետ կապված ճշգրտում	-	-	-	-	-	109,067	109,067
Ավելացում	-	567	10,290	24,205	5,507	-	40,569
Օտարում	-	-	(967)	-	-	-	(967)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	112,383	10,998	123,721	45,458	95,689	109,067	497,316
Ավելացում	11,616	-	7,734	-	-	67,221	86,571
Օտարում	-	-	(8,222)	(21,253)	(871)	-	(30,346)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	123,999	10,998	123,233	24,205	94,818	176,288	553,541
Կուտակված մաշվածություն							
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	19,171	10,431	61,908	14,291	41,998	-	147,799
Տարվա հաշվարկ	5,619	7	13,870	1,692	7,145	31,162	59,495
Օտարման հետևանքով դուրսգրում			(839)				(839)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,790	10,438	74,939	15,983	49,143	31,162	206,455
Տարվա հաշվարկ	6,228	7	21,030	2,421	7,069	52,627	89,382
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(6,691)	(15,733)	(834)	-	(23,258)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,018	10,445	89,278	2,671	55,378	83,789	272,579
Հաշվեկշռային արժեք							
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,593	560	48,782	29,475	46,546	77,905	290,861
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	92,981	553	33,955	21,534	39,440	92,499	280,962

Վարձակալված շենքի գծով ներդրումներն իրենցից ներկայացնում են վարձակալած տարածքների գծով կապիտալացումները:

Վարձակալած տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 10-ում

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

Ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունի 81,114 հազար ՀՀ դրամ զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ (2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 51,320 հազար ՀՀ դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, վստահագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	9,224	6,404	15,628
Ավելացում	530	-	530
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,754	6,404	16,158
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,754	6,404	16,158
Կուտակված ամորտիզացիա			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	6,925	5,169	12,094
Տարվա հաշվարկ	967	462	1,429
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,892	5,631	13,523
Տարվա հաշվարկ	894	315	1,209
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,786	5,946	14,732
Հաշվեկշռային արժեք			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,862	773	2,635
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	968	458	1,426

6 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ պահեստում	416,631	711,350
Ժամկետանց ապրանքներ	23,606	22,854
Ապրանքների արժեքի մինչև իրացման զուտ արժեք նվազեցում	(23,606)	(22,854)
	416,631	711,350

Շարունակվող գործունեության գծով 2020 թվականի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը կազմում է 1,546,800 հազար դրամ (2019 թվականի ընթացքում՝ 3,369,157 հազար դրամ):

Որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքն իր մեջ ներառում է նաև պաշարների արժեքի մինչև իրացման զուտ արժեք նվազեցումները: Ակնկալվում է, որ ներկայացված պաշարները

ամբողջությամբ կփոխհատուցվեն/կիրացվեն տասներկու ամսվա ընթացքում: Պաշարները գրավադրված չեն:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	220,283	236,441
	220,283	236,441
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	382,164	1,342,938
Կանխավճարներ մաքսային մարմիններին	121,912	202,203
Այլ	886	599
	504,962	1,545,740
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	725,245	1,782,181

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Տե՛ս ծանոթագրություն 22(ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ բանկում	99,180	260,154
Դրամական միջոցներ ճանապարհին	65,101	162,989
	164,281	423,143

Տե՛ս ծանոթագրություն 22(ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

9 Կապիտալ

9.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 1 (մեկ) բաժնեմասից, որի անվանական արժեքը կազմում է 50 հազար ՀՀ դրամ: Ընկերության մեկ բաժնեմասը ամբողջությամբ տեղաբաշխված է և լրիվ վճարված: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

10 Վարձակալություն

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	50,222	29,820
Ոչ ընթացիկ	51,706	51,582
	101,928	81,402

Ընկերությունը վարձակալել է տարածք, որն օգտագործվում է վարչական նպատակով: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս ծանոթագրություն 4-ը):

Ստորև աղյուսակում նկարագրված են Ընկերության վարձակալական գործառույթները ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի.

Օգտա-գործման իրավունքի ձևով ակտիվ (ՕԻՁԱ)	Վարձա-կալված ՕԻՁԱ-ների քանակ	Մնացոր-դային ժամկետ	Երկա-րացման հնարա-վորությամբ վարձակա-լությունների քանակ	Ձեռք բերման հնարա-վորությամբ վարձակա-լությունների քանակ	Գործակցին կապված փոփոխուն վճարով վարձակա-լությունների քանակ	Դադարեցման հնարա-վորությամբ վարձակա-լությունների քանակ
Գրասենյակային տարածքներ	1	2.5 տարի	1	-	-	-
Պահեստային տարածք	1	3 տարի	1	-	-	-

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: Ապագա նվազագույն վարձավճարները 2020թ. Դեկտեմբերի 31-ի և 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	50,222	29,820
Ֆինանսական ծախս	7,842	7,310
	58,064	37,130
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	51,706	51,582
Ֆինանսական ծախս	2,535	4,393
	54,241	55,975
Ընդամենը Համախառն վարձավճարներ	112,305	93,105

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավություն

Ընկերությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, թույլատրելի չէ որոշակի փոփոխուն վարձավճարներ ճանաչել որպես վարձակալության գծով պարտավորություն, դրանք ծախսագրվում են իրականացման պահին:

Վարձակալության գծով պարտավորությունը չափելիս չներառած վճարներին վերաբերող ծախսերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Կարճաժամկետ վարձակալություններ	-	23,460
	-	23,460

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	21,418	261,675
Հարկային տուգանքների գծով պահուստ	170,291	-
Պարտավորություններ աշխատակիցներին չօգտագործված արձակուրդայինների գծով	18,044	21,749
	209,753	283,424
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Ստացված կանխավճարներ	11,714	19,741
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	2,278	15,827
Այլ	299	-
	14,291	35,568
	224,044	318,992

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 22(ա)-ում:

12 Հասույթ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Ապրանքների իրացումից	2,597,336	5,667,012
Ծառայությունների մատուցումից	-	1,480
	2,597,336	5,668,492

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը խմբավորված է հետևյալ կերպ.

Հազար դրամ	Ապրանքների իրացումից	Ծառայությունների մատուցումից	Ընդամենը
2020	Հայաստան	Այլ	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	2,597,336	-	2,597,336

Հազար դրամ	Ապրանքների իրացումից	Ծառայությունների մատուցումից	Ընդամենը
2020	Հայաստան	Այլ	
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	2,597,336	-	2,597,336
Հասույթի ճանաչման ժամանակացույց			
Ժամանակի կոնկրետ պահին	2,597,336		2,597,336
	2,597,336	-	2,597,336

Հազար դրամ	Ապրանքների իրացումից	Ծառայությունների մատուցումից	Ընդամենը
2019	Հայաստան	Այլ	
Սեգմենտի հասույթ՝ ընդհանուր	5,667,012	1,480	5,668,492
Սեգմենտի հասույթ՝ արտաքին հաճախորդներին վաճառքներից	5,667,012	1,480	5,668,492
Հասույթի ճանաչման ժամանակացույց			
Ժամանակի կոնկրետ պահին	5,667,012	1,480	5,668,492
	5,667,012	1,480	5,668,492

13 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Վաճառված ապրանքների ինքնարժեք	1,546,800	3,369,157
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	-	133
	1,546,800	3,369,290

14 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Կոմիսիոն վճարներ	454,043	1,208,649
Անձնակազմի վարձատրություն	96,183	112,055
Հիմնական միջոցների մաշվածություն	86,601	53,828
Մարքեթինգային ծախսեր	36,835	72,660
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	18,063	19,451
Փաթեթավորման ծախսեր	11,393	23,375
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	1,209	1,429
Գովազդային ծախսեր	586	18,165
Հայերեն մակնշման ծախսեր	-	170
Այլ	3,554	3,599
	708,467	1,513,381

15 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Հարկային տուգանքների գծով պահուստ	170,291	-
Անձնակազմի վարձատրություն	148,530	170,776
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	72,341	53,918
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	55,572	157,356
Բանկային և ապահովագրական ծախսեր	36,902	81,747
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	14,031	10,487
Հիմնական միջոցների գծով ընթացիկ ծախսեր	11,703	8,112
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,399	17,183
Հիմնական միջոցների մաշվածություն	2,781	5,667
Չփոխհատուցվող հարկեր	1,066	83,369
Գրասենյակային տարածքի վարձավճար	-	23,460
Այլ	1,890	13,493
	521,506	625,568

16 Այլ Ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Արտարժույթի փոխարկումից	8,524	12,638
Ժամկետանց և խոտան ապրանքների արժեզրկում	5,600	5,825
Ռոյալթիների գծով	890	2,750
Տույժ և տուգանք	-	8,270
Գործառնական այլ ծախսեր	181	6,308
	15,195	35,791

17 Զուտ ֆինանսկան (ծախս)/եկամուտ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Ֆինանսկան եկամուտ		
Բանկային մնացորդի վրա հաշվեգրված տոկոսներ	3,314	4,021
	3,314	4,021
Ֆինանսկան ծախս		
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(13,480)	(10,035)
	(13,480)	(10,035)
	(10,166)	(6,014)

18 Փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	222,662	(46,915)
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	14,178	(5,962)

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,371	(1,301)
Շահաբաժնի վճարումից	(1,456)	(209)
	239,755	(54,387)

19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	(3,746)	(49,883)
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման գծով	5,718	4,293
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,972	(45,590)

Հարկային դրույքաչափերի փոփոխություններ և հետագա հարկային ծախսերի վրա ազդող գործոններ

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում 2020թ. հունվարի 1-ից շահութահարկի դրույքաչափը նվազեցվել է 20%-ից 18%-ի:

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%
Շահույթ նախքան շահութահարկի գծով հարկումը	29,597		64,247	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	(5,327)	-18%	(12,849)	-20%
Չհարկվող եկամուտ	7,299	25%	(32,741)	-51%
	1,972	7%	(45,590)	-71%

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	(5,372)	(9,665)
Շահույթում կամ վնասում ճանաչված	5,718	4,293
Տարեվերջի մնացորդ	346	(5,372)

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	3,915	(667)	3,248
Ակտիվի վարձակալության գծով պարտավորություն	14,653	429	15,082

Հազար դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Պաշարներ	4,114	135	4,249
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	22,682	(103)	22,579
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	(14,031)	5,044	(8,987)
Ակտիվի օգտագործման իրավունք	(14,023)	777	(13,246)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(28,054)	5,821	(22,233)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(5,372)	5,718	346

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	4,441	(526)	3,915
Ակտիվի վարձակալության գծով պարտավորություն	-	14,653	14,653
Պաշարներ	4,221	(107)	4,114
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	8,662	14,020	22,682
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	(18,327)	4,296	(14,031)
Ակտիվի օգտագործման իրավունք	-	(14,023)	(14,023)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	(18,327)	(9,727)	(28,054)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(9,665)	4,293	(5,372)

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի հավաստի տվյալները: Ընկերության պաշարների հետագա

իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ միջազգային շուկայում և աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս ծանոթագրություն 23):

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3.7-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	220,283	236,441
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	164,281	423,143
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	384,564	659,584
Ֆինանսական պարտավորություններ		
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	209,753	283,424
Վարձակալություն	101,928	81,402
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	311,681	364,826

22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են Ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը
- իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը

ա) Արտարժութային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ռուբով արտահայտված գնումների հետ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը:.

2020թ.

Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	123,602	-	96,681	-	220,283
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	95,898	79	64,350	3,954	164,281
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	**219,500**	**79**	**161,031**	**3,954**	**384,564**
Ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	207,289	-	2,139	325	209,753
Վարձակալություն	101,928	-	-	-	101,928
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	**309,217**	**-**	**2,139**	**325**	**311,681**
Զուտ ենթարկվածություն	(89,717)	79	158,892	3,629	72,883

2019թ.

Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	236,441	-	-	-	236,441
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	222,567	73	200,217	286	423,143
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	**459,008**	**73**	**200,217**	**286**	**659,584**
Ֆինանսական պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	105,155	-	177,943	326	283,424
Վարձակալություն	81,402	-	-	-	81,402
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	**186,557**	**-**	**177,943**	**326**	**364,826**
Զուտ ենթարկվածություն	272,451	73	22,274	(40)	294,758

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը ԱՄՆ դոլարի եվրոյի և ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

Հազար դրամ		ԱՄՆ դոլարի ազդեցությունը	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2020թ.	2019թ.
Շահույթի վրա	10%	8	7
	-10%	(8)	(7)

Հազար դրամ		Եվրոյի ազդեցությունը	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2020թ.	2019թ.
Շահույթի վրա	10%	15,889	2,227
	-10%	(15,889)	(2,227)

Հազար դրամ		Ռուբլու ազդեցությունը	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2020թ.	2019թ.
Շահույթի վրա	10%	363	(4)
	-10%	(363)	4

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է:

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Ընկերությունը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը հաջորդող 60 օրերի ընթացքում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները:

2020թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	39,462	-	170,291	-	-	209,753	209,753
Վարձակալություն	4,113	53,951	54,241	-	-	112,305	101,928
	43,575	53,951	224,532	-	-	322,058	311,681

2019թ.

Հազար դրամ	Մինչև 1 ամիս	1-12 ամիս	1-3 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն դրամական հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	283,424	-	-	-	-	283,424	283,424
Վարձակալություն	2,139	34,991	55,975	-	-	93,105	81,402
	285,563	34,991	55,975	-	-	376,529	364,826

23 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):):

23.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2020թ. դեկտմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	220,283	220,283	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	164,281	164,281	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	209,753	209,753	-	-
Վարձակալություն	101,928	101,928	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
Նկարագրություն	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	236,441	236,441	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	423,143	423,143	-	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	283,424	283,424	-	-
Վարձակալություն	81,402	81,402	-	-

Բանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

24 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը ու կուտակված շահույթը:

Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետիրոջը վճարվող շահաբաժնի գումարը,վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	1,212,090	2,757,321
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(164,281)	(423,143)
Կապիտալ	1,047,809	2,334,178
Ընդհանուր սեփական կապիտալ	1,212,090	2,757,321
Ընդհանուր ֆինանսավորում	1,212,090	2,757,321
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.86	0.85

25 Պարտավորվածություններ

25.1 Իրավական պարտավորվածություններ

Աուդիտի եզրակացության օրվա դրությամբ ընկերությունը հանդես չի գալիս որպես պատասխանող որևէ դատական գործընթացում և հանդես է գալիս հայցվոր որոշ դատական գործընթացներում: Մասնավորապես, 2020թ.-ին Ընկերությունը հայց է ներկայացրել Պետական Եկամուտների Կոմիտեյի դեմ՝ հարկային ստուգման ակտը չեղյալ համարելու համար: Ընկերությունը վերոնշյալ դատական գործի հետ կապված 2020թ. դեկտմբերի 31-ի դրությամբ ճանաչել է պահուստ 170,291 հազար դրամ չափով (տե՛ս ծանոթագրություն 11,15):

26 Պայմանականություններ

26.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ

ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

27 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	164,281	423,143

28 Կապակցված կողմեր

Ընկերության բաժնեմասերի 100%-ը պատկանում է Օրիֆլեյմ Հոլդինգս Բի Վի ընկերությանը՝(Հասցե՝ Բոլդուկ գեբուվ Ա Յութոպիալաան 52 , 5232 ՍԵ Հերթոգոնբոշ , Նիդերլանդներ), որը նաև հանդիսանում է Վերջնական վերահսկող: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

28.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ

Գործարքներ	2020թ.	2019թ.
Վերջնական հսկողի հետ կատարված գործարքներ		
Շահաբաժիններ	1,576,800	163,500
Համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ կատարված գործարքներ		
Ստացված ապրանքներ և ծառայություններ	3,053,836	3,289,138
Ապրանքների վաճառք	113,890	1,480

Հազար դրամ

Մնացորդներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ կատարված գործարքներ		
Տրված կանխավճարներ	381,851	1,296,446
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	96,681	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,254	177,935

28.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	37,639	38,237